

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՔՐ ՀԷԿ-ԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

<b>Ֆինանսավորման ձև</b>	Վարկ/ Մասնաբաժիններով ֆինանսավորում
<b>Գումար</b>	Առանց սահմանափակումների (Բանկի մեկ փոխառուի գծով նորմատիվային սահմանաչափի սահմաններում)
<b>Արժույթ</b>	ՀՀ դրամ
<b>Տարեկան տոկոսադրույք</b>	Մինչև 10.5%
<b>Ժամկետ</b>	Մինչև 12 տարի
<b>Վարկառուներին ներկայացվող հիմնական պահանջներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. ՀԷԿ-ի կառուցման և վերազինման համար նախատեսված տեխնիկատնտեսական հիմնավորման և/ կամ աշխատանքային նախագծի առկայություն;</li> <li>2. ՓՀԷԿ-երի դրվաձքային հզորությունը չպետք է գերազանցի 10ՄՎտ;</li> <li>3. ՓՀԷԿ-ը պետք է միանա երկրի հոսանքափոխանցման ընդհանուր ցանցին;</li> <li>4. Նախագծի իրականացման համար պահանջվող գումարի առնվազն 30% չափով ներդրում սեփականատերերի կողմից;</li> <li>5. ՓՀԷԿ-ը պետք է լինի մասնավոր սեփականություն, ընդ որում բաժնեմասերի ոչ պակաս, քան 51%-ի սեփականատերը պետք է լինի ՀՀ ռեզիդենտ;</li> <li>6. Անհրաժեշտ լիցենզիաների և թույլտվությունների առկայություն:</li> </ol>
<b>Ապահովություն</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Անշարժ գույքի գրավ;</li> <li>2. Շարժական գույքի գրավ;</li> <li>3. Դրամական միջոցների գրավ;</li> <li>4. Հաշվարկային հաշիվների շրջանառության գրավ;</li> <li>5. Ֆիզիկական անձանց երաշխավորություն/ ընկերության հիմնադիրների և այլ/;</li> <li>6. Փոխկապակցված կազմակերպության երաշխավորություն (առկայության դեպքում);</li> <li>7. Այլ ապահովություն՝ համաձայն Բանկի Վարկային կոմիտեի որոշման:</li> </ol>
<b>Վարկի նպատակ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Շինարարական աշխատանքներ;</li> <li>2. Սարքավորումների ձեռքբերում, տեղափոխում և մոնտաժային աշխատանքներ (գեներատորներ, տուրբին, էլ. սարքավորումներ և այլն);</li> <li>3. Շինարարական նյութերի ձեռքբերում;</li> <li>4. Խողովակների ձեռքբերում, տեղափոխում և մոնտաժ;</li> <li>5. Տրանսպորտային և մաքսային ծախսերի վճարում;</li> <li>6. Կրեդիտորական պարտքերի մարում:</li> <li>7. Այլ նպատակներով՝ համաձայն Բանկի Վարկային կոմիտեի որոշման:</li> </ol>
<b>Հիմնական պարտավորության մարման կարգ</b>	Վճարման ժամանակացույցին համաձայն՝ ելնելով բիզնեսի պահանջներից (մինչև 24 ամիս հիմնական գումարի մարման արտոնյալ ժամկետով)

<b>Հաշվեգրված տոկոսների մարման կարգ</b>	Ամենամյա մարումներ՝ սկսած վարկի տրամադրմանը հաջորդող ամսվանից	
<b>Ապահովագրություն</b>	Համաձայն Բանկում գործող ընթացակարգի	
<b>Վարկի տրամադրման միանվագ վճար</b>	Վարկի գումարը մինչև 400,000,000 ՀՀ դրամ - վարկի գումարի 0.3% չափով՝ նվազագույն գումար 10,000 ՀՀ դրամ, առավելագույն գումար 500,000 ՀՀ դրամ	
	Վարկի գումարը 400,000,001 ՀՀ դրամ և ավելի - վարկի գումարի 0.2% չափով	
<b>Վարկի ձևակերպման (գույքային ապահովության գրավի իրավունքի գրանցման*) միանվագ վճար</b>	Գրանցման ժամկետ (աշխ.օրեր)-ընտրվում է հաճախորդի կողմից	Վճարի չափը** (ՀՀ դրամ)
	4	26,400
	3	51,400
	2	76,400
	<i>*իրականացվում է հաճախորդի համաձայնության առկայության դեպքում</i>	
<i>**գանձվում է գույքային յուրաքանչյուր միավորի համար</i>		
<b>Վերջնական օֆերտայից հրաժարվելու տուգանք</b>	Վարկային գործարքի գումարի 0.15% (Տուգանքը գանձվում է վերջնական օֆերտայի հիման վրա և առկայության դեպքում (ստորագրվում է Բանկի և Հաճախորդի միջև տվյալ վարկային գործարքը Բանկի Վարկային կոմիտեի կողմից հաստատվելուց հետո))	
<b>Ժամկետանց հիմնական պարտավորության մասի նկատմամբ կիրառվող տույժ</b>	0.1 % օրական	
<b>Ժամկետանց տոկոսների նկատմամբ կիրառվող տույժ*</b>	0.1 % օրական	
<b>*Պայմանագրով հաշվարկվող տուժանքների (տույժերի և տուգանքների) չափը չի կարող գերազանցել գանձման ժամանակ ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանաչափը:</b>		
<b>Հիմնական պարտավորության վաղաժամկետ մարման համար կիրառվող տուգանք</b>	2% վաղաժամկետ մարվող գումարից	
<b>Վարկի ոչ նպատակային օգտագործման համար միանվագ տուգանք</b>	Ոչ նպատակային օգտագործված գումարի 5%-ի չափով	
<b>Ֆինանսավորման եղանակ</b>	Անկանխիկ	
<b>Վարկային պայմանագրով սահմանված օգտագործման եղանակի խախտման համար տուգանք</b>	Օգտագործման եղանակի խախտմամբ օգտագործված գումարի 5% չափով, միանվագ	

<b>Մոնիտորինգի պայմանների չկատարման տուգանք</b>	1% վարկային միջոցների մնացորդից միանվագ, բայց ոչ ավելի, քան 2,000,000 ՀՀ դրամ
<b>Գույքային ապահովությունը գրավից ազատման գործընթացի կազմակերպման միջնորդավճար</b>	1,500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
<b>Վարկային գործարքի սպասարկման (պայմանների փոփոխության) վճար</b>	<p>. Վարկային գործարքի ցանկացած պայմանի (այդ թվում՝ գրավի մասով, բացառությամբ հաջորդող գրավի թույլտվության) փոփոխության դեպքում 100,000 ՀՀ դրամ, միանվագ յուրաքանչյուր հայտի համար:</p> <p>. Վարկային գործարքի պայմանների էական (հիմնական)* փոփոխությունների դեպքում՝ Վարկի մնացորդի 0.2% չափով, բայց ոչ պակաս քան 100,000 ՀՀ դրամ և ոչ ավելի, քան 1,000,000 ՀՀ դրամ: Վճարը գանձվում է միանվագ, յուրաքանչյուր հայտի համար:</p>
<p><b>*Վարկային գործարքի պայմանների էական (հիմնական) փոփոխություններ են համարվում հետևյալ փոփոխությունները</b></p> <ul style="list-style-type: none"> <li>. Տոկոսադրույքի իջեցում;</li> <li>. Գործարքի ընդհանուր ժամկետի փոփոխություն;</li> <li>. Վարկային սահմանաչափի ավելացում**,</li> <li>. Գործարքի նպատակի (նպատակային օգտագործման ձևակերպման) փոփոխություն (վարկի սահմանաչափի շրջանակներում միանգամյա գործարքի նպատակի փոփոխության դեպքում կիրառվում է 100,000 ՀՀ դրամ միանվագ վճար յուրաքանչյուր հայտի համար):</li> </ul> <p><b>**Վարկային սահմանաչափի ավելացման դեպքում միանվագ վճարը հաշվարկվում է լրացուցիչ (ավելացվող) սահմանաչափից:</b></p>	